

Երկրորդ թիւին մէջ Մօսա անուան ըով կը գտնենք դրոշմուած և Նոր Ծաղիկ, Մեր զարմացումը ստուգելու մեծ է որ այն հասու որ ճնշման ու սղութեան օրերուն, նա միջոցներ գտած է հայերէն լեզուով թերթ մը պահելու: Ասիկայ ոչ միայն ապրիլ, այլ և զուրիշներ ապրեցնել էր իր հետ. ասիկայ մեր ազգային իտէալին կայծը փոշիին տակ արծարծելն էր, ու նուիրական հուրը պահել: Մենք կարդացինք երկու խմբագրականները, որ նա զետեղած է Մօսայի և Նոր Ծաղիկի սկիզբը: Իսկոյն աչքի կը զարնէ որ Արշալուի, Թօթափած իր տղայութեան խակութիւնները, աւելի պարզ, աւելի վարժ գրիչ մը յերևան կը բերէ, ուր կը զգացուի գործունէայ մարդը: Շատ իսկ եռանդ և համոզում ունի իր արուեստին խմբագիր մ'ըլլալու համար: Կ'ոգևորէ և կը քշէ կը տանի իր հետ, ներքին կրակն ունի: Այս կրակն է որ կ'ոգևորէ իր ամէն ընթերցողները՝ ողբալու պատանի քերթուածագրին մէջ մեծ խորհող մը, հրապարակագիր մը և մեծ սիրտ մը:

Հ. Ն.

=====

— Պատերազմը կրնայ արդարացի ըլլալ՝ մի միայն իբր օգտակար միջոց խաղաղութիւնը ապահովելու:

— Շատ կրեցիք, խայտառակաբար ամբաստանեցաք. համբերող եղէք. պատմութիւնը իր վրէժը պիտի առնու. այժմէն կ'երայխառնործ մեզ:

— Քրիստոսի կրօնքը՝ հայրենասիրութեան համար մէկ օրէնք կը դնէ. այն որ կատարեալ քրիստոնէայ չէ՝ կատարեալ հայրենասէր չի կրնար ըլլալ:

— Ներկան անցելոյն պտուղն է, իւր կողմնուն մէջ կը կրէ ապագան:

— Եկեղեցւոյ օրէնքները՝ Պետութեանց ալ օրէնքներ են:

ՄԻԲԱՆԱԾՈՐ ՄԵՐՍԻԷ

ԼԵԶՈՒԱԴԻՏԱԿԱՆ

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԵՓԻՐՄԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԱՅԻՑ ՄԷՋ

Եփրեմի վկայք Արեւից, որուն թարգմանութիւնը Ոսկեդարէն է, արդէն մասամբ (?) ծանօթ էր Հայկազեան Բառարանի հեղինակներուն: Դոյնին մէկ մասը տպուած է Սոփերքի Ի հատորով. «Պատմութիւն վարուց սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսի և ճառի վկայսն արեւից» (տպ. Վենետ. 1854): Վերջին անգամ ամբողջ գործը զանազան ձեռագիրներու համեմատութեամբ տըպագրութեան տուաւ ողբացեալն Գալուստ Տէր-Մկրտչեան: Գիրքը թէ և ամբողջապէս տպուած է էջմիածնի տպարանին մէջ, բայց մինչև այսօր հրատարակուած չէ՝: Այս աշխատութեան օրինակ մը հեղինակը սիրայօթար իմ տրամադրութեան տակ դրած ըլլալով՝ հոս կը հաւաքեմ այն բոլոր նոր բաները՝ որոնք Առձեռն Բառարանին ծանօթ չեն, կամ ըստ իս որեւէ բացաւարութեան պէտք ունին:

1. Երու

Եւ զարիւնն ձեր, որ ներկեալ և չոգաւ, և ոչ երրն երուաց՝ որ է անկողին նորա, կարէ լուանալ և սրբել զսպանութիւնն ձեր, որով սեպաւ և եմուտ ի հող, և ոչ որդն կենդանի՝ որ է հանդերձ նորա, կարէ սպիտակացուցանել (էջ 54. Նոյն ընթերցուածն ունի նաև Սոփերք, Ի. էջ 103):

Թէ նշանակութեամբ և թէ ձևով անստոյգ բառ մ'է երուաց, ուղղականը ըլլալու է երու կամ երի, որոնց երկուքն ալ այլուտաւ անծանօթ են: Բառգիրք Երեմիայ (ա. տպ. Աւիկոնա 1698, էջ 91, բ. տպ. էջ 126) ունի երեաց «ծառ» ձև մը, որ ապահովաբար ասիկա ըլլալու է: Ըստ այսմ երր երուաց կը նշանակէ

1. Կը լսեմ թէ նորերս արդէն Լոյս տեսած է: Նոյնի ինամբով Լոյս տեսեր է նաև Շապուշ Բագրատունւոյ նորագիտ պատմութիւնը:

«ծառի որդ»։ Բայց որքան ստոյգ է Երեւմիայի մեկնութիւնը, Նկատենք միայն որ երբեք երոսաց և որդն կենդանի մերձաւորապէս հոմանիշ դարձուածներ են, ինչպէս նաև ամբողջ երկու նախադասութիւնները։

2. Կոռոպետ

Իսկ այր մի աւագ՝ անուն Պուսակ, որոյ աշտիճան իւր կողպեհտ կոչէր, որ թարգմանի գլուխ արուեստագիտաց արքունի (էջ 139. նոյն ձևն ունի նաև Սոփերը, էջ 47. Էջմիածնի Ա ձեռագիրը միայն ունի կոպեհտ)։

Ուրեմն կողպեհտ «արհեստագետ» իրանեան բառ մ'է (բարդուած կոպ «արհեստաւոր» բառէն), որուն բուն պահլաւ ձևը յայտնի չէ։

3. Կտուր

Առին սղոց և սկսան սղոցել զմարմինն և կտրեցին արարին վեց մասն և եղին գկտուրսն ի վեց կողով (էջ 154)։

Կտուր բառը հոս կը նշանակէ «կտոր»։ ալլուր այս իմաստով գործածուած չէ. կայ նաև կտուրք «կտրելու գործողութիւնը»։ հմմտ. վերոյիշեալ հատուածէն քիչ մը վեր. «վարեցին երկուս ցիցս միում և հարստեցին զտոսն ընդ մի ցից և զգլուխն ընդ մի, որպէս օրէն է աշխարհի պրկել զոչխարսն ի կտուրս»։

4. Հաստի հարկանել

Ձոտն հաստի հարին, զտեղի կալան և առաքինացան յամենայն տեղիս (էջ 37)։

Հաստի հարկանել ոճը կը նշանակէ «հաստատ կանգնիլ»։ ասոր հետ հմմտ. ի հաստի կայ «հաստատ կանգնիլ» Ոսկ. ա. Թեա. էջ 459. «թեպէտ և ոտքն ի հաստի կայցեն, ցնորեալ աչքն ի խորոցն՝ ամենևին ի վայր գառածեալ անկանիցի»։

5. Ղուղակիլ

Ո՛չ միարանեսցուք, ո՛չ ղուղակիմք և զկամս քո և զթագաւորին քո ո՛չ առ-

նեմք... Պաւղէ ղուղակեցաւ ի մեծութիւն (էջ 192)։

Ուրիշ տեղ չկայ գործածուած ղուղակիլ բայ մը. կայ միայն ղուղակել «պահել, պահպնիլ» (հմմտ. նաև քիչ մը վերը՝ ՄԻ՝ ղուղակեր ի բանս մոլութիւնդ, էջ 151)։ Նախորդ երկու հատուածներուն մէջ ղուղակիլ կը նշանակէ «համոզուիլ, ցանկանալ»։

6. Մերկառակ

Եւ մատնեցան յաւեր յանկարծակի և եղև մերկառակ և կողոպուտ (էջ 35)։

Կը նշանակէ «մերկ և խայտառակ»։ ՆՀԲ և ԱԲ չունին այս բառը, որովհետեւ իրրեւ առանձին բառեր կը կարգան՝ մերկ առակ և կողոպուտ (Սոփերը, էջ 84)։

7. Յազագիլ

Եւ գաւազան անօրէն իշխանին... ահա յազագեալ կայ ի մէջ մայրոյն և չէ ձեռն. հաս միւսանգամ դաւարանալ (էջ 54. նոյն ընթերցուածն ունի նաև Սոփերը, էջ 103)։

Յազագիլ կը նշանակէ «չորնալ»։ ալլուտ անծանօթ է. կար միայն ազագիլ (փիլոն), ազագեալ (Տիմոթ. Կուզ, էջ 278)։

Նոյն հեղինակը ունի նաև ազագանիլ «ցամբիլ»։ Գետք անհունը նուազեցին և եղեն մօտ յազագանել (էջ 42)։

8. Դօշիլ

Իսկ ի վերայ սրբոցն հոսէին թարախը մարմնոյն յոյժ, զի շօշեալ տրորեալ էին յանհնարին տանջանացն (էջ 222)։

Կը նշանակէ «լուծուիլ, քայքայուիլ, մեռած մարմինն նեխիլ փտիլը»։ այս բառը գիտէ ՆՀԲ շոյի ձևով և վկայութեան կը բերէ Նիւս. կազմ. ուր կը գտնենք շոշեալ, շոշեալ զրչութիւնները։ Բայց այս երկուքն ալ սխալ են, Բառը պէտք է ուղղել շաշեալ, ինչպէս կը գտնենք զրւուած կնիք հաւատոյ, էջ 274՝ Նիւսա. ցիէն փոխառեալ նոյն հատուածին մէջ։ Առձ. Բառ. Արեւելեան վկայից մէջ գտնե-

լով շօշուալ ձևը և չանդրադառնալով շոշուալ ձևին վրայ, իբր իրարմէ տարբեր բառեր կը գնէ շոշի «քայքայիլ», շոշի «նեղուիլ, չարչրկիլ»։ Երկուսը պէտք է միացնել իրարու՝ վերի ձևով։

9. Պարսկոյժ

Ո՛վ սկայազունը անուանիք... բարձունքը քան զամենեանս, որը ոչ կըրացուցին զպարաժոյժն պարանոցս ընդ լծով անիծից մահու (էջ 17. Սոփերը էջ 66 ունի զպարոյրն պարանոցս)։ Վերջին ձևը կը յիշէ Առձ. Բառ. «կուրսն, կուրու թին» նշանակութեամբ, որ բաւական անհաս է։ Անշուշտ լաւագոյն ընթերցուածը պէտք է դնել պարաժոյժ կամ թերևս ուղղելի տարածոյժ՝ «տկար, անգոր, չղիմացող» նշանակութեամբ (տար և ժոյժ բառերէն բարդուած)։

10. ՎԱՆԱՐԱՍ

Նովաւ ազատ կանայք ապրեցան ի պէսպէս նկարագործ անօթոց և առ ի վաւարտան ստէպ ստէպ թօթափելոյ (Սոփերը էջ 51. Էջմիածնի տպագրութեան ընթերցուածը մոռցած հմ նշանակել)։

Նէթ բառս կ'ուզէ կարգալ գաւաթսն. Զախջախ կը մեկնէ «խնջը, ստացուածք»։ Սոփերըի հրատարակիչը (էջ 158) կը համարէ պրս. ափսոսք «որ է այտը և զգեղերեսել շարքել կանանց նշանակիցէ նկարագործ անօթովքն»։ Բայց պրս. ափսոսք ո՛չ ձևով կը յարմարի և ոչ ալ նշանակութեամբ։ Բառին նշանակութիւնը կը մնայ անստոյգ։ Առձ. Բառ. բոլորովին ջնջած է զայն, անշուշտ գտնելով լաւագոյն ընթերցուած մը, որ կարծեմ թէ պիտի ըլլայ նաև Էջմիածնի հրատարակութեան մէջ։

11. Տնտղիլ

Ելցէ ճարպն յուռուցեալ և ի տնտղեալ ընդերացն, որ ուտէին զընտիրս պարար-

տաց (էջ 76. Նոյն ընթերցուածն ունի նաև Սոփերը 193)։

Առձ. Բառ. գիտէ այս բառը և կը մեկնէ «ուռիլ»։ այս նշանակութիւնը ստոյգ է, ինչպէս կը հաստատէ Ոսկ. Կողոս. էջ 534. «Եւ նոցա ոգիք ջրգողեալք տնտղեալք տորոմեալք»։

12. Ի փեսոս մոռանել

Որոց հարքն յետս կացեալ էին և ազատոհմն ի փեսոս մոռալ ի գայթակղութիւն յօժարեցուցանէին (էջ 72. Նոյն ընթերցուածն ունի նաև Սոփերը, էջ 129)։ Ընդհանուր իմաստն այն է, թէ երանելի նահատակներուն հայրերը իրենց հաւատքը ուրացել էին. դաւաճաններ էին յոյնպէս իրենց ազգականները, և հիմայ ալ իրենց հարազատները կը յորդորէին դառնալ. բայց ասոնք չլսեցին անոնց գայթակղիչ խօսքերը։

Սակայն չեմ կրնար այս ընդհանուր իմաստէն անդին անցնիլ և ի փեսոս մոռանել ոճին բուն նշանակութիւնը որոշել։ Մի գուցէ պէտք է կարդալ ի միտս մոռանել «մէկուն ուղեղը մտնել, համոզել»։

13. Քեշտ

Այ քէշտ անմիտ և ոչ իմաստուն (էջ 168. երկու ձեռագիրներէն A ունի այ քեշտ, B այ քքեշտ. հրատարակիչը դրած է այ քէշտ, որ պէտք է հասկնալ այ քեշտ. Սոփերըի մէջ չկայ այս հատուածը։

Բառս այլուստ ծանօթ է. կայ պրս. کاست kašt «ազգ և աղտեղի», որ թերևս յարմարի յաջորդ անմիտ և ոչ իմաստուն բառերուն։ Խօսքը ուղղուած է նահատակին։

14. Քորեշ

Կատարեցէ իբրև զգորէշ զկամս քո, Կացո՛ Տէր քորէշ ի քեղի քորիշի և հատո՛ բարկութիւն և չարութիւն մուրեցուցչացն (էջ 74. Նոյն ընթերցուածներն ունի նաև

Սոփերք, էջ 131, միայն վերջին անգամ թողիկոս և լուծին զՎահան: Եւ այսպէս
 կը դնէ քորէշի՝ փոխանակ քորիշի):
 Քորէշ բառին համար Սոփերքի հրա- կեցեալ քարէշ ի տեղի քարէշի՝ Սոե-
 տարակիշը (էջ 158) կը ծանօթագրէ թէ փաննոս յ(Ոնի և Վահան ի Վասպուրա-
 « Զբառս օտար և որպէս թուի ասորի, կան (տպ. էմինի, էջ 212): Երկուքին
 վարէ ուրեք և Սոեփանոս Ուուկելեան, նմանութիւնը կատարեալ է. վերջինին մէջ
 և տայ զիմաստ հախարոս կամ հակառակ յայտնի կ'երևայ որ բառը կը նշանակէ
 իշխանի»: Օրբելեանի այս հատուածն է. յայտնի կ'երևայ որ բառը կը նշանակէ
 կարգեցին ի տեղի նորա զայլ ոմն կա- տով առնելու է նաև առաջինին մէջ,
 (Շարայարելի) Հ. ԱճԱՌԵԱՆ

Գ Ր Ա Կ Ա Ն

ՎԱՍՊԱՐԱՆԻ ԿՆՏԱՆԻ

ԻՆՏՐԱ աստուածն որուն հոգին կը տիրէ
 Երկնակամար շափուղային ոսկեղէն,
 Ծիածանին հիւսուած ամեն գոյներէ,
 Եւ աստղերուն որոնց անթիւ լոյսերէն
 Զահագարդուած է աշխարհն իր էութեան,
 Տեսաւ զիշեր մը ճամբուն վրայ Քաղաքին
 Ուր Գանգէսի ուխտաւորները կ'երթան,
 Հին բանաստեղծն, անմահական Վալմիքին...
 Փոշեթաւալ պատմուճանով հնամենի,
 Ուղեորի ցուպը ձեռքին դողդոջուն,
 Եւ հերարձակ՝ ան կը քալէր անհունի
 Տառապանքով խորունկ աչքերը լեցուն...
 Կուրծքին վըրայ եօթը լարով պըրկըւած
 Քընար մ'ունէր, ցուլի կառափ մը որուն
 Ճակատին տակ կը մոնչէր ոյժը պարտուած
 Աստուածային օրէնքներէն անանուն...
 Եւ ամայի ճամբաներէն տանելով
 Թոգնատխուր ու վշտակոծ իր հոգին
 Մենեաններուն գեղաքանդակ սիւներով,
 Այսպէս կ'երթար մեծ քնարակիւր Վալմիքին...
 Երբ ան վերցուց աչքերն երկինք, աստղերէն
 Շըքեղավառ կ'իջնէր տեսիլքն ինտրայի,
 Ու ծնրադրեց, իր ուսին վրայ տարօրէն
 Զգալով ձեռք մը ծանրութեամբ սիրելի...
 — « Դու ո՞վ Սիրոյ, զիւցազնութեան հազներգու,
 Որ լաւ գիտես երկնքին տակ շաղկապուած
 Կեանքի, մահուան, այս ճամբաները երկու,